ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 5008-Ա « 11 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՅՊՑԻԳ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգի քաղաքապետ Բուրքարդ Յունգի նամակ-հրավերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ.Գևորգյանի N Ն/73802-25 զեկուցագիրը՝ Երևան-Լայպցիգ մշակութային տարվա բացման արարողությանը, «The Spirit of Past Future» խորագրով ցուցահանդեսի բացմանը և Լայպցիգի քաղաքապետարանի հետ երկկողմ բանակցություններ վարելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2026 թվականի հունվարի 8-ից 10-ը ներառյալ գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգ քաղաք, հետևյալ կազմով.

Հայկ Մկրտչյան	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար
Վերգինե Սիմոնյան	Աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին՝ բացառությամբ գիշերակացի, որն իրականացնում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Մկրտչյանի բացակայության ընթացքում վարչության պետի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետ Գոշ Սարգսյանին:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետի

պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետ Դավիթ Գևորգյանին:

5.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ